

Վ. ՍԱՐՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Հայ ժողովուրդը, պատմական ձախորդ հանգամանքների բերումով՝ (զանգվածային արտագաղթեր. պանդխտություն, վտարանդում), տարբեր դարերում, մայր հայրենիքում ապրած և իրենց ազգային լեզվով ստեղծագործած գրողներից բացի ունեցել է նաև տարաշխարհիկ հեղինակներ, որոնք ապրել ու ստեղծագործել են օտար երկրներում, ուրիշ լեզուներով։

Ձանց առնելով հեռավոր անցյալը, հիշատակենք XX դարի այնպիսի ականավոր հայազգի հեղինակների, ինչպիսիք են՝ անգլերեն գրող Մայքլ Առլենը (Տիգրան Գույումճյան), Վիլյամ Սարոյանը, Լևոն Ջավեն Սյուրմելյանը, Ֆրանսերեն գրող՝ Արթյուր Ադամովը (Հարություն Ադամյան), Անրի Թրուայան (Լևոն Թորոսյան), Վահե Գողելը, Ռուբեն Մելիքը, իսպաներեն գրող Ալիսիա Կիրակոսյանը և էլի ուրիշներ։

Նշված հեղինակների շարքում, բարեբախտաբար, եղել են և այնպիսիք, որոնք կյանքով ու գրական գործունեությամբ կապված լինելով հանդերձ օտար միջավայրին՝ չեն խզել իրենց հարաբերությունը հարազատ ժողովրդի հետ։ Այդ կարգի հայազգի գրողների մեջ առաջին տեղերից մեկը պատկանում է Վիլյամ Սարոյանին։

«Սփյուռքը ծնունդ տված էր Սարոյաններու, բայց ինքը, Սարոյանը միայն մնացած էր հավատարիմ հայ ոգիին։ Ամեն ինչ հայկական էր իր մեջ, նյութը, շունչը. ան անգլերեն կը գրեր միայն։ Եվ ան հառաջապահի, դրոշակիրի դեր կատարած էր այն օրերուն, երբ Սփյուռքի տարածքին, շատերը կը ջանային ծածկել իրենց հայությունը, ազավաղել ու պոչատել իրենց սնունդները և երբ Սարոյանը բարձրադաղակ կը պոռար աշխարհին դեմ. «Անունս Արամ է» (ՀՈՒՍ, 112),— իրավացիորեն գրել է նրա մասին գրողի հետ 1966-ին հարցազրույց ունեցած արտասահմանյան հայ մտավորականներից մեկը։

Սարոյանի մասին, իբրև XX դարի ամերիկյան (և ոչ միայն ամերիկյան) առաջադիմական գրականության ամենաինքնատիպ ու նշանավոր դեմքերից մեկի, շատ է դրվել աշխարհի տարբեր երկրներում և տարբեր լեզուներով։ Բաղմաթիվ մենագրություններում ու հոդվածներում բնութագրվել ու գնահատվել են նրա բազմաժանր ու բազմահատոր երկերը։ Ընդգծվել են, մասնավորապես, Սարոյանի ստեղծագործությունների գաղափարական և գեղարվեստական նշանակալից արժանիքները (հումանիստական բնույթ, մարդկանց ու ժողովուրդների եղբայրության գաղափարի ջատագովում, առողջ հումոր և ողմանտիլմ, ջերմ քնարականություն...)։

Աշխարհահռչակ գրողի ստեղծագործության ազգային-բանահյուսական արմատների հարցը, սակայն, մինչև այժմ չի դարձել հատուկ և հանգամանա-

լից քննության առարկա: Մինչդեռ դա մի հարց է, որի լուսաբանությունը կարող է զգալի չափով նպաստել գրողի կյանքի ու ստեղծագործության համակողմանի և ամբողջական հետազոտությանը, լրացուցիչ կարևոր նրբագծեր ու երանգներ ավելացնել նրա գրական ընդհանուր դիմանկարի վրա:

1

Սարոյանը ծնվել է Ամերիկայի Կալիֆորնիա նահանգի Ֆրեզնո քաղաքում, ֆիզիկական կյանքի ապահովություն, աշխատանք ու վաստակ որոնելու համար Բիթլիսից այստեղ տեղափոխված հայ ծնողների ընտանիքում: Տարբեր ժամանակ Ֆրեզնոյում են հաստատվել նույն Բիթլիսից և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից պանդխտած ու գաղթած շատ ուրիշ հայ ընտանիքներ ևս:

Ինչպես Սարոյանների, այնպես էլ նրանց հայրենակիցների Ֆրեզնոյում հաստատվելը պատահական չի եղել: Հեռավոր Ամերիկայի այդ վայրը իր բնակլիմայական պայմաններով բավական նման էր նրանց հայրենիքին, հատկապես վերջինիս ջրին ու հողին: Տարիներ անց անդրադառնալով հիշյալ հանգամանքին, Սարոյանը գրել է. «Ջուրը հայի համար կրակի նման սրբազան բան է: Ֆրեզնոյի այգեպանները կիրականորյա զբոսախնջույքի էին գնում ոռոգման ջրանցքների գլուխը կամ Սան Խոաքին ու Քինկո գետերի ափերը... Նրանց համար գետ գնալը Հայաստան գնալու կամ իրենց ջահելության օրերին վերադառնալու նման բան էր... Այստեղի ջուրը շատ էր նման Հայաստանի ջրին: Ֆրեզնոյի և ամբողջ Սան Խոաքինի հովտի հողը բավական նման էր Հայաստանի հողին... Այստեղ ծաղկում էին որթատունկը և մրգատու ծառերը, մանավանդ ծիրանի ծառը: Հայերն այստեղ շուտով թթենի տնկեցին, որովհետև թթենին այն ծառն է, որ գիտեին և սիրում էին դեռ հայրենիքից» (ՍԱ, № 40, 4):

Ֆրեզնոյի ոչ միայն ջուրն ու հողը, այլև այնտեղ բնակություն հաստատած արևմտահայ գաղթականների զբաղմունքը, առօրյա կենցաղը, վարք ու բարքը, բառ ու բանը դեռևս պահպանել էին նրանց ծննդավայրի ազգային ավանդույթները: Այդ առիթով գրողն արձանագրել է. «...Ամեն կապ խղված չէր մեր և Հայաստանի միջև... Տակավին, կը մասնակցեինք տոնախմբություններու, ուր կը գտնվեին մեր հայրենակիցները, մեզ նման գաղթական... Մեծ մայրս ժամեր շարունակ կը պատմեր մեզ Հայաստանի մասին...» (ՀՈւՍ, 176):

Զնայած Սարոյանը ծնվել է Ամերիկայում և մանկութ հասակ է առել օտար միջավայրում, սակայն Արևմտյան Հայաստանից Ամերիկա տեղափոխված իր հարազատների ու հայրենակիցների միջոցով գրողին փոխանցվել են պապենական բնաշխարհի սերն ու կարոտը, նրա բնակիչների հոգեկան խառնրվածքը: «Ես Գալիֆորնիա ծնած եմ, բայց պիթլիսցի եմ: Պիթլիս հոգիիս մեջ է: Ես կը տեսնեմ Պիթլիսը: Կը տեսնեմ հոն մեր տուն, մեր փողոց: Բայց կը վախնամ հիմա հոն երթալ, աչքերով տեսնել, որովհետև հոգիիս Պիթլիսը հիմա հոն չեմ գտներ...» (ՀՈւՍ, 58), — ասել է նա իր բարեկամ հայ գրողներից մեկին: Հայրենիքի սերն ու կարոտն էին, որ տարիներ անց գրեցին Սարոյանին այցի գնալու յուրայինների ծննդավայրին, ուր նրան հաջողվեց զրտնել պապենական երբեմնի շեն տան ավերակները միայն (ԴԲՀ, 70):

Սարոյանի մեջ վաղ հասակից արմատներ է բռնել նաև Արևմտյան Հայաստանի հայ բնակչության կենդանի խոսակցական լեզուն: Ապագա գրողն այն լսել է, նախ և առաջ, իր հարազատներից: «Մեր տան մեջ, — գրել է նա, —

անգլերեն կը խոսեինք միայն այն մարդոց ներկայության, որոնք հայերեն չէին կրնար խոսիլ» (ՍՇ, 131): Հարազատներից բացի Սարոյանը հայոց լեզուն սովորել է նաև սփյուռքում ցրված բիթլիսցի, մշեցի, վանեցի, խարբերդցի և ուրիշ վայրերի հայերից, որոնց հետ նա տարիներ շարունակ առիթ է ունեցել մոտիկից շփվելու և հաղորդակցվելու:

Դրողը միայն ըստ պահանջման հարկի չէ, որ գործ է ածել իր մայրենի լեզուն: Նա ներքին հաստատ համոզմունք է ունեցել այդ լեզվի անվիճելի արժանիքների, ազգապահպանման դործում նրա խաղացած բացառիկ կարևոր դերի մասին. «Ի՞նչ ճկուն է ու այլազան մեր լեզուն» (ՀՈՍ, 106), «Ես կը սքանչանայի հայ լեզվի գեղեցկության, այդ լեզվի անմասն բանաստեղծականության, վրա» (ՀՈՍ, 99): «Հայերենը հայուն խորհուրդն է» (ՀՈՍ, 56):

Ողջ կյանքը ապրած լինելով Ամերիկայում ու Եվրոպայում, գրողն իր հայերեն բանավոր խոսքի մեջ հազվադեպ է գործածում օտար բառեր: Հավատարիմ իր առարկայական մտածելակերպին, նա խուսափում է նաև վերացական ու վերամբարձ արտահայտություններից: Չնայած հայերենի իր համեմատաբար սահմանափակ բառապաշարին, Սարոյանը կարողանում է պարզ բառերով հաջողությամբ արտահայտել սեփական մտքերն ու զգացմունքները, տեղ հասցնել իր ինքնատիպ ըմբռնումները կյանքի ամենաբարդ առարկաների ու երևույթների վերաբերյալ: Ուշագրավ է այն հայացքը, որ ունի գրողը հայոց լեզվի պարզությունը, անաղարտությունը, բնականությունը և ազգային հընչերանգը պահպանելու անհրաժեշտության մասին: «Անանկ ըրեք, որ հասկցվի, անանկ բառեր գործածեցեք, որ շունչի պես է, երգելու պես է, պոռալու պես է: Հայո՛ւ բառեր...» (ՄՍ, 101),— խորհուրդ է տվել Սարոյանը իր հայ գրչակիցներին:

Իսկ և իսկ այդպիսին է գրողի սեփական հայերեն բանավոր խոսքը: Դա. ինչպես ճիշտ նկատված է, Բիթլիսի բարբառի, արևմտահայ և արևելահայ լեզուների իր տեսակի մեջ անկրկնելի ու յուրօրինակ մի համադրություն է, անգլիական շեշտադրությամբ և բիթլիսյան առոգանությամբ (ՀՈՍ, 6, 14): Ահա մի քանի նմուշ այդ խոսքից.

Երևանի իր երկրպագուների տված հարցումին, թե՛ ի՞նչն է պատճառը, որ իրենք այդքան շատ են սիրում նրան, գրողը պատասխանել է. «Ինչու դուք ինձի կը սիրեք: Դուք ինձի շատ կը սիրեք, որովհետև ես ձեզի շատ կը սիրեմ» (ԲՀ, № 246): Այս պատասխանի մեջ դժվար չէ նկատել սիրո փոխադարձության վերաբերյալ հայ ժողովրդի ավանդական հայացքի հետևյալ առածատիպ բանաձևի ուրույն արձագանքը. «Սիրե ինձ, սիրեմ քեզ», «Սերը սեր կու բերե» (ՂԱ, 121, 125): Մի այլ անգամ, դարձյալ Երևանում, իրեն տրված այն հարցումին, թե՛ ի՞նչ կարծիք ունի ինքը կանանց մասին, Սարոյանը հետևյալ կերպ է ձևակերպել իր միտքը. «Կին, մարդ... հավասար են, փառք աստծո նսան տարբեր են. կնիկ՝ կնիկ է, մարդ՝ մարդ» (ԲՀ, 246): Գրողի այս պատասխանի մեջ առկա է ոչ միայն հայ գեղջուկի բառ ու բանը («Փառք աստծո», «կնիկ կնիկ է, մարդ՝ մարդ»), այլև բացահայտված է նրա մտայնությունը կնոջ և տղամարդու միջև գոյություն ունեցող փոխհարաբերության վերաբերյալ, որի արտահայտություններն են «Կնիկը էրկան կեսն է», «Տղամարդ որ կա դրսի պատ է, կնիկ՝ ներսի պատ» ժողովրդական հայտնի ասացվածքները և էլի ուրիշներ (ՂԱ, 68, 204, 269—270):

Վերջին անգամ Երևան ժամանելու հաջորդ իսկ օրը դիմելով իր հին ծանոթ հայ գրողներից մի երկուսին, Սարոյանն ասում է. «Բաշտ կուզեմ տեսնել, հող, այգի, խաղող...»: Նրան տանում են Հոկտեմբերյան: Ճանապարհին խաղողի այգիներ նկատելով՝ Սարոյանը խնդրում է. «Բջնանք, մտնանք այգի, իմ ձեռքով խաղող կուզեմ քաղել...»: Պատասխանում են, որ այգիներն արդեն քաղված են և խաղող չկա այլևս: Սարոյանն անմիջապես հարում է. «Ձի կըրնա պատահիլ: Հայ մարդ միշտ քանի մը ճուժ կը թողու երեսաներու և թըռչուններու համար...»: Մտնում է այգի, գտնում է փնտրած խաղողը և մանկորեն հրճվելով, ասում է. «Հիմա տեսա՞ք» (ԴՍ, № 206): Բերված գրվազի մեջ լավագույնս երևան է եկել ոչ միայն Սարոյանի հայերեն բանավոր խոսքի նկարագիրը, այլև նրա լավատեղյակությունը հայրենի հողի աշխատավորի հնավանդ սովորություններից մեկին, երբ վարուցանք անող հայ շինականը իր սերմնացուն հողին պահ տալու պահին երգախառն աղոթքով դիմելով աստծուն՝ բարբառել է.

Իդա մեկ բուռ թռչունաց համար,
Իդա մեկ լէ անձար աղբըտի, դոնախի համար,
Իդա լե իմ ճժուկներու համար... (ՂԶ, 99—100):

Դարերով սրբագործված մի ծիսակարգ, որին կարող էր տեղյակ լինել բիթլիսցի տոհմիկ շինականի հարազատ զարմիկը:

Այցելելով Երևանի հայկական դպրոցներից մեկը և շոյելով իրեն շրջապատած երեսաների գլուխները, Սարոյանն ասել է. «Դուք ինձի պես ուրիշ տեղ ծնած չեք, դուք հայրենիք ծնած եք: Ձեր բախտ հիմա չեք կրնար հասկընալ, հետո պիտի հասկնաք... Ձեզմե շատեր պիտի այցելեն ամբողջ աշխարհ, պիտի տեսնեն շատ գեղեցիկ ու անուշ տեղեր ու պիտի հասկնան, որ ավելի գեղեցիկ ու անուշ տեղ չկա, քան հայրենիքը» (ԴՍ, № 206): Կարող է թվալ, որ այս խոսքերը տարեց մարդու կողմից փոքրահասակներին հասցեագրված սովորական խրատի բնույթ ունեն: Բայց այդպես կարող է թվալ միայն առաջին հայացքից: Երբ խորամուխ լինենք գրողի ասածի էություն մեջ, ապա կը համոզվենք, որ նա այս դեպքում ևս հավատարիմ է իր ակունքներին: Նրա խրատի հիմքում ընկած է հայ ժողովրդի հայացքը հայրենիքի նվիրականության վերաբերյալ: Մի հայացք է դա, որը պատկերավոր զուգահեռականությամբ հիանալի արտահայտված է «Հուր ու մուր աբիւնը քաղցր ա, վաքանի հողն ու ջուրն անուշ» բուն ազգային նկարագիր ունեցող ժողովրդական հայտնի ասացվածքում (ՂԱ, 97): Ինչպես Սարոյանի գործածությամբ, այնպես էլ բերված ասացվածքում «անուշ» բառը սովորական քաղցրի իմաստ չունի: Այն կիրառված է ախորժելիի, լավի, դուրեկանի իմաստով: Բալով վաքան օտար բառին, առկա վերջինս էլ, ինչպես հայտնի է, հոմանիշ է հայրենիք, ծննդավայր բառերին:

Բերված օրինակները, որոնց թիվը կարելի է բազմապատկել, ակնառու ցույց են տալիս, որ արևմտահայ բանավոր խոսքի շտեմարանից ծագող սարոյանական լեզվի թե՛ բառապաշարը և թե՛ ոճն ունի շեշտված ազգային-ժողովրդական երանգավորում: Այն միաժամանակ աչքի է ընկնում իր անսեթեվ վեժն ու պարզությամբ, պատկերավորությամբ և դյուրըմբռնելիությամբ, օժտված է ունկնդիրների վրա ներգործելու անուրանալի ուժով:

Նշենք մի կարևոր փաստ ևս, որը զգալիորեն լայնացնում է ղրողի բանավոր խոսքի իմացության մասին մեր ունեցած պատկերացման սահմանները:

Պարզվում է, որ Սարոյանը չի բավարարվել միայն մայրենի լեզվի իր վարած սովորական բանավոր խոսքով: Նա բավական համարձակ միտք է հղացել սեփական թատերգություններից մեկը ձայնագրել հայերեն և ժապավենը ուղարկել Հայաստան բեմագրության համար: Գրողը նշել է անգամ այդ թատերգության վերնագիրը, որ է՝ «Ուզենֆ-շուզենֆ հայ եմֆ»: Մի վերնագիր է դա, որն ինքնին խոսում է տվյալ գործի հայացի բնույթի մասին (ՊՍ, № 1, 164): Նույն փաստի մասին մի այլ անգամ Սարոյանն ասել է. «Ես Փարիզի մեջ մագնիսոֆոնի վրա մե դրամա գրած եմ հայերեն... Կը փափագիմ այդ միջոցով գրել դրամա և ոչ լիթերատոր, որովհետև իմ լեզուն լիթերատորի համար չէ...» (ԲՀ, № 246):

Սարոյանի կապը հայկական միջավայրի և իր մայրենի լեզվի հետ չի սահմանափակվել միայն Ֆրեզնոյի շրջանակներով: Հայտնի է, որ նա բոլոր կյանքը շրջագայել է Ամերիկայի ու Եվրոպայի տարբեր քաղաքներում, այցելել է Լոնդոն, երկար ապրել Փարիզում, պարբերաբար եկել է Հայաստան, եղել է Երևանում և հանրապետության մի շարք շրջաններում: Արտասահմանում, թե մայր հայրենիքում, Սարոյանը մշտական շփման մեջ է գտնվել հայության տարբեր խավերի ներկայացուցիչների հետ, ծանոթացել ու մտերմացել է հայազգի այնպիսի նշանավոր դեմքերի, ինչպիսիք են՝ զորավար Անդրանիկը, Եղիշե Չարենցը, Արամ Խաչատրյանը, Մարտիրոս Սարյանը, Վիկտոր Համբարձումյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վարդան Աճեմյանը, Գուրգեն Մահարին և էլի շատ ուրիշներ: Վերոհիշյալ շփումների հետևանքով, տասնամյակների ընթացքում հետզհետե ամրապնդվել է գրողի կապը Հայաստանի, հայոց լեզվի և հայերի հետ, հնարավորություն տալով նրան մոտիկից ճանաչելու և ավելի սիրելու իր հայրենիքը, մայրենի լեզուն ու ազգակիցներին:

Այլևայլ առիթներով Հայաստանի ու հայերի մասին Սարոյանն ասել է.

«Հայաստանի քարեր հայոց հոգուն կը նմանին՝ պինդ, ուժեղ, ոչ ոք չի երևար զանոնք ջնջիսել» (ՀՈՍ, 209):

«Սեանը աչքիս առաջ, հայոց արևը գլխուս վրա, ասորմե աղվոր բան ի՞նչ կրնա ըլլալ մարդու համար» (ՀՈՍ, 208):

«Բացառիկ ժողովուրդ է սակայն հայը... Տոկուն է ան, մեր երկրի ժայռերուն պես ու անոր հոգին բարի՝ այդ երկրի պտուղներուն քաղցրությամբ» (ՀՈՍ, 103):

«Հայը կյանքի ուրախությունը սուր կը զգա, որովհետև դարերով տառապել է: Եվ հայը մեղամաղձոտ է, որովհետև հոգիին մեջ շատ հարստություն կա, բան կուզե ընել, բայց դարերով ճնշեր են, չեն ձգած, որ ընե: Եվ հարբստությունը հոգիին մեջ ծանրացեր է...» (ՀՈՍ, 73):

«Անդրանիկ շատ պատվական մարդ էր, անիկա Ֆրեզնո կապեր, միշտ կու գար իմ քեռի Արամի մոտ, երկար կը խոսեին: Միշտ տխուր էր Անդրանիկ» (ՀՈՍ, 208):

«Եղիշե Չարենցի «Ես իմ անուշը» մինչև այսօր կը նկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը, «Հայր մերին» նման աղոթք մը» (ՀՈՍ, 108):

2

Մայրենի լեզվի հետ Սարոյանը վաղ մանկությունից ունկնդրել է նաև իր հարազատների ու Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից Ամերիկա

պաղթած հայերի ժողովրդական բանավեճի բազմաթիվ նմուշներ: Այս հարցում առանձնապես նշանակալից է եղել գրողի մորական տատի դերը, որն իր հիշողության մեջ ամբարած հայրենի Բիթլիսի բառ ու բանի հարուստ պաշարը հասցնելով հեռավոր Ամերիկա՝ այն հաղորդել է օտարության մեջ ծնված սիրելի թոռանը: Ինքը Սարոյանը տատից լսած այդ բառ ու բանի մասին ասել է. «Իմ մեծ մայր՝ Լուսնթագ, անի զորավոր երգեր կը երգեր... Ես կը դարձանայի, ես կը նայեի, կը հիանայի» (ՄՍ, 92—93): Այդ երգերից գրողը հիշատակել է «Անդրանիկը քաջ յուր ընկերներով», «Ղարիբ ախպեր մեր տուն առի», «Սիրավոր լորիկ, վիրավոր լորիկ» (ՄՍ, 24) սկզբնատողերով հայտնի ժողովրդական երգերը և հատկապես «Ծիրանի ծառը»՝ իրավամբ կոչելով այն «հայկական ազնվագույն երգերից մեկը» (ՍԱ, № 40, 4):

Նույն կերպ Սարոյանն անդրադարձել է նաև Լուսնթագ տատի պատմած ժողովրդական մանրապատումներին (առակներ, զրույցներ և այլն): «Այս տեսակ հազար-հազար պատմություններ ունեք: Կը հարցնեի՝ այդքան պատմություն ինչպե՞ս կը հիշես ու չես մոռնար... Կը հիշեմ, կըսեր, որովհետև հետաքրքիր են» (ԴՍ, № 1, 38):

Անդրադառնալով իր անտնտես ու շռայլ բնավորությանը, գրողը մտաբերել է մոր կողմից իրեն հասցեագրված ժողովրդական հայտնի առածներից մեկը. «Մայրս կըսեր. Վիլյամ գղալ-գղալ կը ժողվե, շերեփ-շերեփ կը ցպնե» (ԴՍ, № 1, 36):

Ուրիշ անգամներ Սարոյանը նշել է իր մյուս հարազատներից ու ազգականներից (Մինաս պապից, Թադուհի մորից, Փառանձեմ մորաքրոջից, Արամ քեռուց) և արևմտահայ հայրենակիցներից լսած այս կամ այն բանավոր ստեղծագործության մասին.

«Ուրախ եմ ըսելու, որ ան ալ ինծի պես չափազանց չքավոր էր. աղբատուրլունը զինք ուրսի շան մը պես կը հետապնդեր, ինչպես կըսե ժողովրդական առածը» (ՍՇ, 19):

«Պարապ կենալեմ ձրի աշխատիլը լավ է, ըսած են մեր պապերը» (ՍՇ, 165):

«Ինչպես մշեցիներն են ասում՝ փոփոխության ու կորստի դրացումով. ի՞նչ էինք, ի՞նչ եղանք» (ՀՈՍ, 257):

«Իմ ջուրը չի գնում նրա հետ» (ՀՈՍ, 26): Հմմտ. «Երկուսի ջուրը մի առվով չի գնում» (ՀԲԲ, 576):

Նույն կերպ Սարոյանը հիշատակել է նաև մանկական հասակում իր լսած ժողովրդական հեքիաթների մասին:

«Բարեկամ մը ունեինք, որ շատ վարմանալի մարդ էր: Միտք բանի մը վրա չէր կենդրոնանար: Մեղի կուզար և հեքիաթներ կը պատմեր: Մենք փոքրերս կը շարվեինք անոր շուրջ ու կը նայեինք անոր բերնին, թե ինչ պիտի պատմե: Շատ կը սիրեր պատմել տնային օձի մասին...» (ՀՈՍ, 20):

Բերված օրինակների վրա անհրաժեշտ է ավելացնել մի կարևոր փաստ ևս: Դա Սարոյանի ծանոթացումն է Արմենակ Շահմուրադյանի կատարած բնաշխարհիկ ժողովրդական երգերին: Նոսքն այն երգերի մասին է, որոնք հռչակավոր Լորդին իր ծննդավայր Տարոնո աշխարհից հեռավոր Կալիֆորնիա հասցնելով՝ մեծ հիացմունք է պատճառել, շատ ուրիշ հայերի հետ, նաև ասպագա գրողին: «Պզտիկության ժամանակ,— նշել է Սարոյանը,— սաստիկ բիրեր եմ ան երգեր, որ մեր պատվական մշեցի Արմենակ Շահմուրադյան դիս-

կի տվավ: Երբ որ ես իմ գրություն տահա սորված չէի, երբ որ կը սորվեի անի, միշտ ֆոնըղրաֆի վրա մտիկ կընեի: Ժողովրդական երգեր են և մեկամաղձոտ են ընդհանրապես: Ղվարթ ալ երգեր ունինք... Անի շատ կը սիրեմ, շատ կը պնդատեմ, մինչև ասօր մտիկ կընեմ» (ՄՍ, 16, 116):

Մեջբերված վկայությունները ցույց են տալիս այն ակունքները, որից սերել են Սարոյանին լավ ծանոթ բանահյուսական ստեղծագործությունները: Այդ ակունքներն են, ըստ էության, հանդիսացել այն ուրույն դպրոցն ու համալսարանը, որտեղից գրողը ստացել է ոչ միայն մայրենի լեզվի իր գիտելիքները, այլև գրական երկերի մի զգալի մասի ատաղձը:

Հայտնի է, որ Սարոյանը, նյութական ծանր պայմանների պատճառով, քիչ թե շատ կանոնավոր կրթություն չի կարողացել ձեռք բերել: Նրա խոստովանությամբ ինքը միայն կյանքի դպրոցն է անցել, իսկ իր ուսուցիչներն էլ Լոկել են հասարակ գեղջուկները: «Փրոֆեսորներ, որ քննեն,— ասել է նա,— անոնցմե ասլափ բան սորված չեմ: Ես գյուղացիներն ավելի սորված եմ» (ՄՍ, 16):

Մի ուրիշ առիթով գրողը հավաստել է. «Հիմնական դպրոցը, ինծի համար, Լոկած է փողոցը» (ՀՈՍ, 175):

3

Իր լսած և ուսած հայրենի բառ ու բանի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ հաղորդելու հետ մեկտեղ, Սարոյանը առիթ բաց չի թողել սեփական կարծիքը հայտնելու այդ բառ ու բանի մասին:

Հայ ժողովրդական բանահյուսությունը նրան հմայել է նախ և առաջ կյանքի բազմապիսի երևույթներն ու առարկաները կենդանի կերպարներով և ինքնատիպ պատկերներով արտացոլելու կարողությամբ, կենսական խոր ընդհանրացումներ կատարելու ուժով, մտքի ու զգացմունքի ներդաշնակությամբ: Մեծ գրողի համար պակաս կարևոր նշանակություն չի ունեցել նաև այդ բանահյուսության ժանրային բազմազանությունն ու հարստությունը, քիչ խոսքերով շատ բան արտահայտելու հատկությունը, նուրբ հումորը, դառն հեգնանքը, պարզությունը...

Մոտիկից ծանոթ լինելով հարազատ ժողովրդի բաճարովեստին և ընդհանրապես բարձր կարծիք ունենալով նրա մասին, Սարոյանը միաժամանակ հանդես է բերել նաև իր երոշակի նախասիրությունները՝ կապված սեփական ստեղծագործական հետաքրքրությունների, ճաշակի, գեղագիտական ու փիլիսոփայական ըմբռնումների, ընտրած գրական թեմաների, կերտած տիպերի ու կերպարների ուրույն բնույթի հետ: Նշանակալից են, օրինակ, այն մտքերը, ուր արտահայտել է գրողը ժողովրդական երգերի մասին՝ իբրև ազգի մտավոր ու հոգեկան կերտվածքը դրսևորող ստեղծագործությունների: Իր բանավոր զրույցներից մեկի ժամանակ նա ասել է. «Պատեհություն կունենամ հիմա խոսք մ'ըսել թե՛ ազգի մը միտք-հոգին երգի մեջ է» (ՄՍ, 117): Մի ուրիշ անգամ վերստին անդրադառնալով ժողովրդական երգերին՝ նա իր կարծիքն այդ երգերի մասին ձևակերպել է հետևյալ ընդհանրացնող նախադասությամբ. «Ատոնց մեջ է մեր ժողովուրդին ոգին, անոր ապրելու խորհուրդը» (ՎՍ, № 45):

Ուշագրավ են և այն գիտարկումները, որ արել է Սարոյանը ժողովրդական երգերի՝ գրականության և երաժշտության համար ունեցած բարերար ազդեցության առիթով: Նուրբ, խորը զգացողությամբ և սկզբունքային ճիշտ դիրք

քորոշումով աչքի ընկնող այդ դիտարկումները հիշեցնում են Թումանյանի և Կոմիտասի համապատասխան ասույթները ժողովրդական երգերի բանաստեղծական լեզվի, արվեստի ու մեղեդու բարձր արժանիքների, նրանց բուն ազգային-ժողովրդական ոճի ու ոգու մասին:

Խոսելով Վասպուրականի հռչակավոր «Գութանի գովքը» (ՂՀ, 69) երգի մասին, Սարոյանը հատուկ ընդգծել է այդ տիպի երգերից գրողների առնելիք դասի անհրաժեշտությունը: «Մեծ խորհուրդ կա ատ երգի մեջ, մեծ իմաստություն. աշխարհք գութանով կապրի, այսինքն հողով: Գրող պետք չէ, որ կտրվի ուր հողեն» (ՎՍ, № 45):

Մի ուրիշ անգամ նշելով այն տպավորության մասին, որ ինքն ստացել է ժողովրդական երգի ստեղծագործական մշակման ուղղությամբ մեզանում տարվող մեծ աշխատանքից, հիացած մասնավորապես Արամ Խաչատրյանի կողմից իր սիմֆոնիկ, օպերային ու բալետային երկերում բացառիկ վարպետությամբ վերաստեղծված ժողովրդական երգերով, հատկապես նրա հանրահայտ «Որսկան ախպերով», Սարոյանը այդ երևույթը իրավացիորեն դիտել է իբրև Հայաստանի ժամանակակից երաժշտության մեջ ազգային ոգու և ձևի արմատավորման դրական փաստ: «Խաչատրյան ընտրեց մեր ժողովրդական երգեր, դրավ ուր մեծ գործերուն մեջ: Ատի հարմար բան է: Ատի գործածել է մեր արմատներ ուր նորոգված երգերուն մեջ և մյուզիքի մեջ» (ՄՍ, 117):

Իրենց անակնկալ, խոսուն պատկերներով և համեմատություն-զուգադրություններով Սարոյանին զարմանք ու սքանչացում են պատճառել մեր ժողովրդական հանելուկների լավագույն նմուշները. «Շատ, շատ լավ է, ի՜նչ գեղեցիկ պատկեր է ատիկա, ի՜նչ գեղեցիկ համեմատություններ, մետաֆորներ» (ՀՍ, № 8, 81), — բացականչել է նա, ծանոթանալով դրանց:

Սարոյանի գրական հակումներին ու ճաշակին առանձնապես մոտ ու հարազատ են եղել հայ ժողովրդի ստեղծած առածները, առակները, երգիծական զրույցները և ուրիշ մանրապատումներ: «Ինձի հետաքրքիր են ֆոլկլորի պլզտիկ տեսակները, — ասել է նա մի առիթով, — ես ատոնք շատ կը սիրեմ: Ատոնց մեջ կերևա ժողովրդի հոգին, մտածողություն, հումոր. պլզտիկ տեսակներուն մեջ ավելի մեծ իմաստություն կա» (ՀՍ, № 8, 83):

Ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների նկատմամբ Սարոյանի ունեցած հատուկ հետաքրքրության և բարձր կարծիքի բնութագրման տեսակետից հատկանշական է գրողի մի հայտարարությունը, որը նա արել է 1970 թ. Հայաստան կատարած իր երկրորդ այցի ժամանակ: Տեղեկանալով, որ մեզանում կան հատուկ մասնագետներ, որոնք զբաղվում են հայոց ազգային էպոսի պատումների, ժողովրդական առած-ասացվածքների, երգիծական հորինվածքների, հանելուկների, երգերի, հեքիաթների և ուրիշ բանահյուսական ստեղծագործությունների հայտնաբերումով, գրառումով, հետադոտությամբ, և որ նրանք արդեն իսկ բազմաթիվ հատորներ են տպագրել, Սարոյանը իր գոհունակությունն է արտահայտել այդ առթիվ. «Շատ աղվոր գործերով կը ղբաղիք... Ատոնք մեծ բաներ են, շատ կը սիրեմ» (ՀՍ, № 7, 95):

Լավ ծանոթ լինելով հայրենի բառ ու բանին և բարձր գնահատելով նրա արժանիքները, Սարոյանը այդ պաշարը այլևայլ եղանակներով (մեջբերում, օրինակ, զուգադրություն, այլաբանություն) հաջողությամբ կիրառել է նախ և

առաջ իր հայերեն բանավոր խոսքում, որով այն ձեռք է բերել ունկնդիրների վրա ներգործելու լրացուցիչ ուժ, ստացել ընդգծված ազգային-ժողովրդական երանգավորում ու հնչեղություն:

Մի քանի օրինակ միայն:

Հայ գրողների հետ ունեցած մի հանդիպման ժամանակ, Մասիս սարից իր ստացած տպավորության մասին խոսելիս Սարոյանը վերհիշել է իր իմացած սրեկյան թափառիկ կոչված զրույցներից մեկը:

«Առավոտ, երբ գնացրը մոտեցավ Երևանին,— հաղորդել է նա,— երկրն-քին ամպ մը տեսա, բայց ատիկա ամպ չէր, Մասիսի գլուխն էր, ճերմակ, փառավոր: Շատ կը սիրեմ Մասիս: Դուք ալ կը սիրե՞ք, թե ձեզի համար սովորական դարձած է»:

Գրողներից մեկն ասում է. «Երբ նայում ենք՝ կամ ուրախանում ենք, կամ տխրում»:

«Մասիսը շորս կողմից է գեղեցիկ, պարոն Սարոյան,— հարում է մյուսը,— շորս կողմից պիտի նայել նրան»:

«Խճ ոգուտ, մերը չի»,— ավելացնում է երրորդը:

Սարոյանը անվրդով ասում է. «Ատիկա կարևոր չէ»,— և տեղնուտեղը պատմում է վերն ակնարկված արևելյան զրույցը:

«Ատենոք երիտասարդ մը կը սիրահարի թագավորին աղջկան: Բայց աղքատ կըլլա, դերվիշ, շորերը չլուտ, երեսը՝ աղտոտ: Ամբողջ օրը սազը ձեռին թագավորի պատուհանին տակ կը շալե, մեկ օր, երկու օր, երեք օր... Թագավորը դուրս կուգա, կրսե.

— Տղա՛, աղվոր կը շալես, բայց իմ աղջիկը քեզ չի սիրեր:

— Է՛, թող չսիրե,— կը պատասխանե տղան,— բայց ես անոր կը սիրեմ...

Հիմի մենք ու Մասիսը» (ՀՍ, № 7, 96):

Նման հաջող օրինակով իր միտքը հիմնավորելու համար Սարոյանին տվյալ դեպքում մեծապես օգնել է ոչ միայն նրա բնատուր սուր հիշողությունը, այլև տարբեր ազգերի բանարվեստի մարզում ունեցած լայն իմացությունները:

Երևանյան իր հանդիպումներից մեկի ժամանակ, պատմելով սեփական մանկության անուրախ օրերից և Ֆրեզնոյում վերաբնակված «ջարդեն փախած հայերի» ծանր կյանքից, Սարոյանը չի մոռանում հատուկ ընդգծելու, որ չնայած վերոհիշյալ հանգամանքին, ինչպես ինքը, այնպես էլ իր հայրենակիցները օտարության մեջ էլ ունեցել են «պզտիկ ուրախություններ», որոնք իրենք ի զարմանս տեղացիների, անց են կացրել մեծ աղմուկ-աղաղակով: Նրշված հանգամանքը համարելով իր ժողովրդի կենսունակության ու լավատեսության բնորոշ արտահայտությունը, գրողն իբրև ապացույց այդ լավատեսության, տեղնուտեղը, պատմում է տատից լսած հետևյալ «պզտիկ պատմությունը».

«Օր մը թագավոր կուգա ատաղձագործի մը քով, կրսե. մինչև առավոտ ինձի հարյուր ջուվալ թեփ պիտի տաս, եթե չտաս, գլուխդ պիտի կտրեմ: Մարդ տխուր կը նստի. մինչև առավոտ հարյուր ջուվալ թեփ ուսկի՞ց պիտի տա: Այդ ժամանակ բարեկամ մը տունը կուգա, կը հարցնե. ինչո՞ւ տխուր նստեր ես... Այսպես ու այսպես, կրսե, թագավոր այսպես պայման գրավ... Հոգ մի ըներ, կրսե, հաց բեր, գինի բեր, քեֆ ընենք... Հապա թե՞փ... Բան մը կըլլա, կրսե... Կը նստին, կուտեն, կը խմեն... Ատաղձագործ պատուհանեն կը նայի դուրս՝

առավոտ մոտ է, հապա թե՞փ, կըսե... Հոգ մի ըներ, բան մը կըլլա... Թագավորի մարդիկները արգեն եկեր, դուռը կը ծեծեն, խեղճ ատաղձագործը գույնը նետեր, դարձյալ կը հարցնե. հապա թե՞փ... Բարեկամ դարձյալ կըսե. հոգ մի ըներ, բան մը կըլլա... Եղբա՛յր, ալ ինչ պիտի ըլլա, հիմա գլուխս կը կտրեն...

Թագավորի մարդիկները դուռը կը զարնեն, դուրսեն կը պոռան. ատաղձագործ, թագավոր այս գիշեր մեռավ, դագաղ մը շինե անոր համար... Բարեկամ կըսե՝ ըսի չէ՞, հոգ մի ըներ, բան մը կըլլա...» (ԴԲՀ, 84—85):

Սարոյանի կողմից իր մայրենի կենդանի խոսակցական լեզվով վերարտադրված այս «պզտիկ պատմությունը» Արևմտյան Հայաստանի հայ բնակչության բանավոր արձակի սիրված ու տարածված նմուշներից է: Այն, «Ուստա Նաջար» անունով հայտնի է նաև Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում: Նույն «պզտիկ պատմությունը» կամ զրույցը տարածված է եղել նաև քրդերի միջավայրում, որից և սերում է նրանց՝ «Ուստա Նաջար, ռաբը ռունի մինա հորջար. խադե յըկը, դարգա հազար» հայտնի ժողովրդական ասացվածքը: Այն հայերեն թարգմանությամբ նշանակում է՝ «Վարպետ Նաջար, վերկաց նստի ամեն անգամվա նման. աստված մեկ է, դռները հազար» (այս մասին մեզ հաղորդել է քրդական բանահյուսության քաջ գիտակ, բանագետ Հ. Ջնդին):

Այցելելով Թբիլիսի և ծանոթանալով Հաբեթ անունով բնիկ բիթլիսեցի մի հասակավոր մարդու հետ, Սարոյանը հարց է տալիս. «Իմ մեծ մայրին՝ Լուսինին կը ճանչնա՞ս, անիկա Բիթլիս ծնած մեծցած է, Ֆրեզնո պզտիկ բոստան մը ուներ, շատ աղվոր շաղգամներ կը բուսներ: Անոր պարտեզին կից պղտիկ պարտեզ մ'ալ մեկ անգլուհիվ կը պատկաներ: Ամեն օր մեծ մայրիս հայերեն կը հարցներ, ինչպե՞ս են շաղգամներ, լախանեն ճիճու չկերե՞ր, տոմաթես կարմրե՞ր է: Ան ալ անգլերեն կը պատասխաներ: Օր մ'ալ գացի մեծ մայրիս տուն, տեսնեմ՝ շատ հերսոտած է: Ըսի՝ մայրիկ ի՞նչ է եղեր, ինչո՞ւ կը ջղայնանաս: Ըսավ՝ ի՞նչ ընեմ, որ չհերսոտիմ. սա կնիկ քսան տարի է իմ կողի կապրի, ուսում ունի, կարդացվոր է: Սա լուսավոր երկրին մեջ քսան տարի չկրցավ հայերեն սորվիլ» (ՀՍ, № 7, 87):

Եթե Մասսի հետ կապված պատմության և «Ուստա Նաջար» մանրապատումի դեպքերում Սարոյանը դիմել է իր իմացած ժողովրդական զրույցներին, ապա ներկա դրվագում նա ինքն է ստեղծել առակատիպ մի մանրապատում: Հենվելով տատի հաղորդած տեղեկության վրա, նա հնարամտորեն օգտագործել է դրա համար հայ ժողովրդական երգիծապատումների ժանրին հատուկ երկախոսական եղանակը, հումորային երանգավորումն ու «պայթուցիկ» վերջաբանը:

5

Հայկական կյանքը և հայ ժողովրդական բանահյուսությունը, Սարոյանի հայերեն բանավոր խոսքի նման, գրողի ստեղծագործական ավիշի միջոցով, ներթափանցել է նաև նրա գրական երկերի զգալի մասի հյուսվածքի մեջ:

Այս տեսակետից ուշագրավ են հեղինակի ազգային թեմաներ, գործող անձինք ու հերոսներ ունեցող հետևյալ գործերը:

«Իմ սիրտը լեռներում է» (ՍԻ, 3—54) թատերգության գլխավոր գործող անձինք (բանաստեղծ Բեն Ալեքսանդրը, իր պատանի որդի Ջոնին և ալեհեր մայրը), ինչպես հայտնի է, ազգությամբ հայեր են, որոնք ճակատագրի բե-

րումով բնակվում են Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքի Սան-Բենիտո կոչված փողոցում: Սրանցից ավագը՝ Ջոնիի պառավ տատիկն է, Բեն Ալեքսանդրի հալազատ մայրը, հայրենի բնաշխարհից տեղահան եղած, նահապետական վարք ու բարքով, բառ ու բանով ու հոգեբանությամբ տիպիկ արևմտահայ մի գեղջկուհի: Նրա իմացած միակ լեզուն հայերենն է, որը իր նոր շրջապատում ոչ ոք չի հասկանում, բացի որդուց և մասամբ էլ՝ թոռնիկից:

Տեղին է այստեղ հիշատակելու Սարոյանի մի բացատրությունը իր գրքավածքի գլխավոր հերոսի անուն-ազգանվան սկզբնական հորջորջման առթիվ: «Իմ հերոսի անունը Բենիամին Ալեքսանդրյան է, ամերիկացիներու համար այդ անուն երկար է, ադոր համար դարձուցի Բեն Ալեքսանդր» (ԴԲՀ, 76):

Թատերգության հայկականության էական հատկանիշներից է նրա հիմքում ընկած հայրենաբաղձության գաղափարը: Այդ գաղափարը ցայտուն կերպով դրսևորված է լեռներով հափշտակված թափառաշրջիկ ծերունի շեփորահար Մեք Գրեգորի միջոցով: Դա մի գաղափար է, որը բնորոշ է հայրենի լեռնաշխարհից տեղահան եղած և աշխարհով մեկ սփռված հայության հոծ զանգվածների համար:

Ուշագրավ է տվյալ թատերգության ժանրային մի կարևոր հատկանիշը ևս: Նրա երևանյան բեմադրության առնչությամբ, զրույց ունենալով անվանի ռեժիսոր Վարդան Աճեմյանի հետ, Սարոյանը խոստովանել է, որ տրվյալ գրվածքն ինքը ստեղծել է ժողովրդական թատերախաղերի օրինակով: Նա միաժամանակ ցանկություն է հայտնել, որ բեմադրության ժամանակ նկատի սունվի այդ հանգամանքը: «Անտրակտ պետք չէ,— ասել է գրողը Աճեմյանին,— անտրակտ կընդհատի խաղի գործողություն: Այդ պիեսը նրման է ժողովրդական խաղերուն, որ մեկ շունչով կավարտվի. եթե անտրակտ ընեք՝ խաղի ամբողջություն կը կտորի (ՀՍ, № 7, 100):

«Գեղեցիկ սպիտակ ձիուն ամառը» (ՍՇ, № 145—154) պատմվածքի գործող անձինք, բացի մեկից, բոլորը նույնպես հայեր են, ընդ որում հիմնականում գրողի մայրական տոհմի տարբեր սերունդների ներկայացուցիչներ: Արամը՝ դա ինքը անվանափոխված հեղինակն է ինը տարեկան հասակում: Մուրատը՝ նրա պատանի մորեղբորորդին է: Խոսրովը՝ Սարոյանի մորեղբայրն է: Արաքը՝ վերջինիս որդին: Զոհրապը՝ Մուրատի հայրն է: Տիգրան Հալեպյանը՝ խաղողի այգու տեր մի հայ: Ֆեթվաճյանը՝ նույնպես հայ է, ագարակապան: Միակ այլազգին, որ հանդես է բերված պատմվածքում, դա ասորի Ջոն Բայրոնն է:

Բուն հայկական ընդգծված բնույթ ունի տվյալ գրվածքում խոսրովի և Ջոն Բայրոյի միջև տեղի ունեցող երկխոսությունը, որով հեղինակը հիշեցնում է ընթերցողներին 1915 թ. իր ժողովրդին բաժին ընկած ծանր ողբերգությունը: Երբ ասորի ագարակապանը խոսրովի ներկայությամբ սկսում է ողբալ իր ձիու կորուստը, խոսրովը խստորեն հանդիմանում է նրան, ասելով. «Ամբողջ հայրենիք մը կորսնցուցած ենք: Կարժե՞ ձիու մը համար լալ ու ողբալ...»:

Սարոյանի տվյալ պատմվածքի վրա իր կնիքն է գրել նաև հայ ժողովրդական բանավեստը, մասնավորապես «Սասնա ծռեր» էպոսը, որին նա չէր կարող լավ ծանոթ չլինել այդ էպոսի բնօրրանից գաղթած իր հարազատների ու հայրենակիցների պատումներից: Խոսրով մորեղբայրը, օրինակ, իր հզոր ձայնով, մեծ ուժով և «ծուռ» բնավորությամբ հիշեցնում է մասամբ Զենով

Հովանին, մասամբ էլ՝ Բաղդասարին: Խոսքովի որդի Մուրատը, բոլորի կողմից խենթ համարված այդ պատանին, կարծես Սասունցի Դավթի մի ուրույն երկվորյակը լինի: Այդ է վկայում, մասնավորապես, նրա կողմից Սպիտակ ձին հեծնելու պատմությունը, որը հեռվից-հեռու նման է՝ Քուռկիկ Զալալին նստած, Մսրա Մելիքի դեմ մենամարտի մեկնող Դավթի վիպական հայտնի դրվագին (ՄՇ, 145—154):

«Շինականը» պատմվածքում Սարոյանը պատկերել է Սարգիս անունով մի տիպիկ հայ շինականի հոգեկան դրաման: Արևմտյան Հայաստանի Կուլթիկ կոչված գյուղից ճակատագրի բերումով Ամերիկա ընկած հաղթ մարմնով, լաճնաթիկունք ու թավաբեղ այդ հզոր այրը կարծես մի տեսակ կծկվում և խեղճանում է իր նոր միջավայրում: Նա ոչ մի կերպ չի կարողանում ընտելանալ ու հարմարվել այդ միջավայրին: Անգամ այն ժամանակ, երբ նա ամուսնանում է մի բարետեսիլ ու իրեն համապատասխան հայուհու հետ, ընտանիք է կազմում, դառնում զավակների տեր, կրթություն տալիս նրանց, ինքն էլ վարժվում է անգլերենին, շփվում ուրիշ վայրերից եկած հայ գաղթականներին, հայրենի Կուլթիկի կարոտը դարձյալ հանգիստ չի տալիս Սարգիսին: Այն, իբրև մի ծանր տխրություն և հետապնդող միտք միշտ պարուրած է պահում նրա հոգին: Հարազատ բնաշխարհում մնացած իր պապենական գյուղի համեստ կենցաղը Սարգիսը մինչև վերջ նախընտրում է Ամերիկայի բարեկեցիկ կյանքից:

«Սափրիչը, որուն Բեռիին գլուխը պոկած է կրկեսի վագրը» պատմվածքի (ՄՇ, 187—196) հիմնական կերպարները ևս հայեր են: «Շինականը» պատմվածքի հերոս Սարգսի նման ստիպված լինելով լքելու իրենց պապենական հայրենիքը և ապրուստի միջոց որոնելու համար դեգերելու օտար ափերում, սրանք ևս ոչ մի կերպ չեն կարողանում մերվել իրենց նոր միջավայրին:

Տվյալ գրվածքի գլխավոր գործող անձերից մեկը սափրիչ Արամն է, որին, մազերը հարդարելու համար, առիթ է ունենում այցելելու հեղինակը: Սարոյանի համոզմամբ Արամը «խառնվածքով հողագործ և թերևս փիլիսոփա ըլլալու հարմարությունն ունենք», սակայն Ամերիկա ընկնելով, նա հարկադրվում է սափրիչությամբ մի կերպ հոգալ իր ընտանիքի կարիքները:

Մյուս գլխավոր անձը սափրիչ Արամի մշեցի քեռի Միսսաքն է, ըմբշամարտիկի տվյալներով, կատաղի ու անզուսպ և միաժամանակ անտնտես ու առատաձեռն, փողատյաց, գողություն երդվյալ հակառակորդ մի արարած: Սա ևս, Արամի նման, հարկադրված հեռանում է հայրենի Մուշից: Հարմար աշխատանք գտնելու համար շրջելով քաղաքից քաղաք և երկրից երկիր (Պոլիս, Բեռլին, Փարիզ, Լոնդոն, Նյու Յորք, Հարավային Ամերիկա...), Միսսաքը քաղցի չմատնվելու համար համաձայնվում է աշխատանքի ընդունվել շրջիկ կրկեսում՝ սլարտականություն: ստանձնելով իր գլուխը դնելու հորանջող վագրի երախի մեջ: Եվ մի դժբախտ օր, երբ կրկեսի վագրը կատաղած վիճակում հանկարծ փակում է ծնոտները, Միսսաքի գլուխը մնում է նրա երախի մեջ...

Սափրիչ Արամից լսած վերոհիշյալ ողբերգական պատմությունը ավարտվում է հետևյալ բուն սարոյանական վերջաբանով, ուր լավագույնս բացահայտված է գրողի մտահոգությունը ոչ միայն սափրիչ Արամի և նրա քեռի Միսսաքի, այլև սրանց նման՝ տխուր ճակատագիր ունեցող բոլոր մարդկանց նրկատմամբ: «Անհամբեր կը սսլասեի այն օրվան,— գրում է Սարոյանը,— երբ մազահարդարի պետք ունենայի նորեն, որպեսզի կարենայի Արամին խանութը

երթալ՝ աշխարհի վրա ապրող մարդուն պատմությունը լսելու, կորսված, մինակ և միշտ վտանգի վախով ապրող մարդուն տխուր պատմությունը, իր խեղճ քեռի Միսաքին: Կենդանի ու ապրող յուրաքանչյուր մարդուն տխուր պատմությունը»:

Իր մի շարք ուրիշ հայաբնույթ գրվածքների նման, այստեղ էլ անդրադառնալով ազգային թեմաների ու կերպարների՝ Սարոյանը չի մոռացել իրեն այնքան ծանոթ ու հարազատ հայ ժողովրդական բանավեստը:

Կարծում ենք, որ այս ճանապարհով է, որ նրա ըստ էության ռեալիստական հենք ունեցող ստեղծագործության մեջ մուտք է գործել հայկական հրաշապատում հեքիաթների համապատասխան մոտիվները՝ հիշեցնող՝ վագրի հետ կապված վերոհիշյալ պատմությունը: Դիմելով նման հնարանի, դրողը դրանով իսկ կրկնապատկել է դրամատիկ բնույթ ունեցող իր գրվածքի զգայական ներգործման ուժը, լրացուցիչ ողբերգական հնչերանգ հաղորդելով նրան:

«Առակ իննեւորդ» կոչված նովելի (ԳԹ, № 38) համար նախնական ատաղձ է հանդիսացել խաբված պարզամիտ ամուսնու, սրա անհավատարիմ կնոջ և իր սիրեկանի հետ կապված խարդավանքին վերաբերող ժողովրդական հայտնի երգիծական մասնապատումը, որը պատմում է տապալած սագի պատմության շուրջը, և որը բազմաթիվ տարբերակներով ժամանակին պատմվել է ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում:

Գրողը ամենևին էլ պատահականորեն չի գիմել ժողովրդի մարդկանցից լսած բանահյուսական այս նյութին: Երգիծանքը հարազատ է ոչ միայն նրա անձնական խառնվածքին, այլև գրական դավանանքին և ունի խոր արժանատիք: Երգիծանքով է համեմատված Սարոյանի ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքը: Նա իրավացիորեն գտնում է, որ հումորը իր ժողովրդի ազգային բնավորության բնորոշ հատկանիշներից է: «Հայ իր բոլոր դժբախտություններու մեջ կատակ կը սիրե, կոմիկը կը սիրե, որովհետև լավատես է (ԴՍ, № 1, 38), — ասել է նա մի առիթով: Այլ կապակցությամբ անդրադառնալով նույն հարցին, նա հավաստել է. «Հումոր բարության, առողջության նշան է. վախցիր այն մարդոցմե, որ ծաղր, հումոր չեն հասկնար» (ՄՍ, 41):

Նման դիրքերից մոտենալով վերոհիշյալ երգիծապատումին, Սարոյանն իր ստեղծագործական վառ երևակայության և գրական մեծ վարպետության ուժով, հիմնովին վերստեղծել է այն: Նա զգալիորեն ընդլայնել է իրեն հայտնի բանահյուսական նյութի սյուժեն, բազմապատկել սակավաթիվ երկխոսությունները, գործող անձանց արտաքին ու ներքին հատկանիշները ներկայացրել առավել տիպիկական հանգամանքներում, կատարել է բարոյախոսական կարևոր ընդհանրացումներ: Այդ բոլորի հետևանքով ժողովրդական սովորական երգիծապատումը Սարոյանի գրչի տակ դարձել է Բոկաչչոյի հայտնի նովելները հիշեցնող գեղարվեստական հիանալի մի ստեղծագործություն:

Բերված օրինակների շարքը պետք է դասել նաև Սարոյանի՝ «Ես ինքս երկրի վրա», «Հայր և հայր», «Ուզենք-չուզենք՝ հայ ենք», «Հայաստանի Անդրանիկը», «Հայ գրողները», «Արամ Խաչատրյան» և նման կարգի ուրիշ ստեղծագործություններ: Վերջիններիս մեջ իր ազգային թեմաներով, գործող անձանցով ու հերոսներով առանձնապես աչքի է ընկնում «Անունս Արամ է» բնորոշ խորագրով ժողովածուն:

Ահա թե ինչ է ասել գրողն իր այդ գրքի մասին. «Ես ամենից ավելի ինձ հոգով ու մարմնով կապված եմ զգում իմ այս գրքի հետ, որովհետև նրա մեջ եմ գրել իմ ամբողջ սիրտը: Երբ խորհում եմ այս գրքի մասին, ես ինձ երջանիկ եմ զգում, որ աշդպիսի գիրք եմ գրել: Որովհետև այս գրքում ես գրել եմ իմ նախահայրերի, իմ ընտանիքի ամենօրյա կյանքի, մեծ երազներով Ամերիկայի ընկած հայ գաղթականների, նրանց հուսախաբությունների, արցունքների, հույսերի և երբեմն էլ ուրախությունների մասին... Սիրում եմ այս գիրքը և մինչև այսօր էլ այդտեղ ներկայացված կյանքը, որ մանկությանս և սպասանությանս ինքնակենսագրական մի հատվածն է, հուզում է ինձ... Եվ ինչպես Հայաստանում որոշ մարդիկ իրենց զավակների անունը Համլետ են դրնում, այնպես էլ անդլո-սաքսոն ժողովուրդների մոտ այս գրքիս միջոցով մոտոր է գործել Աբամ անունը» (ՇՎ, № 44, էջ 4):

Հայկական կյանքի և հայ ժողովրդական բանահյուսության հետ կապված իր ստեղծագործությունների մասին Սարոյանը արել է այսպիսի ուշագրավ խոստովանություններ.

«Այն, ինչ ես գրում եմ, այն, ինչ ես երբեք գրել եմ, այլաբանական է: Դա պատահեց անխուսափելիորեն: Ես Փոքր Ասիայի արտադրություն եմ, ուրեմն, իմ մտքում այլաբանականն ու իրականը շաղախվել են իրար: Ինձ համար յուրաքանչյուր իրականություն այլաբանական բնույթ ունի» (ՊՍ, № 1, 162):

«Ես չեմ կարող իմ ինքնության մասին մտածել հայությունից դուրս: Սա ինձ համար այնքան հիմնական է, որքան առաջին կայծը՝ կյանքի» (ՊՍ, 157):

«...Ես Գալիֆորնիայի հայ եմ, Փարիզի հայ եմ, Լոնտոնի հայ եմ, Երևանի հայ եմ, ամեն տեղ հայ եմ և ամեն տեղ նույն մարդն եմ, և որտեղի մասին ալ գրեմ, նույնը պիտի գրեմ...» (ՀՈՍ, 125):

«Եթե հայ շրջանի, հավանաբար ասանկ գրող շրջանի ձիշտ է, հայերեն չեմ կարդար, հայերեն չեմ գրեր, բայց հայերեն կը նայիմ աշխարհին (ընդգծումը մերն է — Ա. Ղ.): Երբ սկսա գրել, ոչ ոք ինձի չըսավ, թե հայերու մասին գրե: Անոնց գիտեի ու անոնց մասին գրեցի» (ԴԲՀ, 166):

Աղգային-հայկական և ընդհանուր արևելյան բանահյուսության տարրերը կարելի է նշմարել Սարոյանի անգամ այն գործերում (լինեն գրանք վիպակներ, պիեսներ, պատմվածքներ, թե՛ մանրապատումներ), որոնց բովանդակությունը, թեմաները, գործող անձինք ու հերոսները վերցված են օտար միջավայրից: Եկատի ունենք մասնավորապես գրողի կողմից կիրառվող գեղարվեստական որոշ արտահայտչամիջոցները (խոսքի արտակարգ պարզությունը, էրկիստությունների առատությունը, պատմողական-նկարագրական տարրի նվազությունը...):

Ամփոփելով մեր քննությունը հանդում ենք հետևյալ հղրակացության.

Վերյամ Սարոյանի հայերեն բանավոր խոսքի, նրա բանահյուսական հարուստ պաշարի, գրական երկերի մի զգալի մասի թեմաների, կերպարների, այդ երկերի ընդհանուր ոգու և ոճի՝ հայ ժողովրդի լեզվի, աղգային բանավիպների, նրա հնօրյա ավանդույթների հետ ունեցած սերտ կապը հաստատուն հիմք է տալիս ընդգծելու, որ Ամերիկայի հինգ նշանավոր գրողների շարքում, Ֆոլկների, Կոլդուելի, Հեմինգուեյի և Սթայնբեկի կողքին դասվելու իրողությունը չի խանգարել աշխարհահռչակ գրողին տարիների ընթացքում յուրովի սրահականելու իր հայկական ուրույն դիմագիծը, իր ստեղծագործության լավագույն նմուշների աղգային-բանահյուսական արմատները:

ՕԴՏԱԴՈՐԾՎԱՄ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- ԲԶ—Գ. Բալոյան, Անավարտ հարցազրույց, «Երեկոյան Երևան», 1978:
- ԳԹ—Վ. Սարոյան, Առակ իններորդ, «Գրական թերթ», 1978:
- ԴԲԶ—Վ. Դավթյան, Բարի հսկան, Երևան, 1979:
- ԴՍ—Վ. Դավթյան, Փառահեղ Սարոյանը, «Սովետական Հայաստան» օրաթերթ, 1978:
- ՀԲԲ—Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912:
- ՀՈԻՍ—Հանդիպումներ Ուիլյամ Սարոյանի հետ, Պեյրոթ, 1978:
- ՀՍ—Ս. Հարությունյան, Ութ օր Սարոյանի հետ, «Սովետական գրականություն» ամսագիր, 1970:
- ՂԱ—Ա. Ղանալանյան, Առաժանի, Երևան, 1960:
- ՂԶ—Հայ շինականի աշխատանքի երգերը, կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, 1937:
- ՄՍ—Լ. Մկրտչյան, Վիլյամ Սարոյանը մոտիկից, Երևան, 1978:
- ՇՎ—Շ. Վարսյան, Հարցազրույց Վ. Սարոյանի հետ, «Հայրենիքի ձայն», 1978, № 44:
- ՊՍ—Կ. Պասաճյան, Մինչև վերջ Վիլյամ Սարոյանի հետ, «Սովետական գրականություն» ամսագիր, 1976:
- ՍԱ—Վ. Սարոյան, Ախ իմ հայրենիք, «Հայրենիքի ձայն», 1968:
- ՍԴ—«Սասունցի Դավիթ», հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1939:
- ՍԻ—Վ. Սարոյան, Իմ սիրտը լեռներում է, Երևան, 1963:
- ՍԸ—Վ. Սարոյան, Պատմվածքներ, հայացուց Հովհաննես Մյուսեղյան, Պեյրոթ, 1978:
- ՎՍ—Վիլյամ Սարոյանի 70-ամյակը, «Հայրենիքի ձայն», 1978, № 45:

НАЦИОНАЛЬНО-ФОЛЬКЛОРНЫЕ КОРНИ
ТВОРЧЕСТВА У. САРОЯНА

Академик АН АрмССР А. Т. ГАНАЛАНЯН

(Резюме)

На основе многочисленных письменных фактов и устных свидетельств в статье делается попытка раскрыть органическую связь тем, мотивов, образов и общего духа значительного числа произведений У. Сарояна с устным творчеством, психологией, бытом и нравами армянского народа, в частности западных армян. Именно благодаря этой связи творчество выдающегося писателя сохраняет своеобразный армянский облик и национально-фольклорные корни.